

«ՊԱՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ 

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Աշխատանքը ընդգրկում է «պար» արմատի ծագումնաբանական, իմաստաբանական առանձնահատկությունները հայերենի տարբեր ժամանակահատվածներում և բառակազմական հնարավորությունների արտահայտությունը գրական հայերենում: Այն մի կողմից՝ տարժամանակյա քննություն է՝ «պար» հասկացության իմաստային զարգացումների դիտարկմամբ, մյուս կողմից՝ համաժամանակյա քննություն՝ «պար» եզրությամբ բաղադրությունների վերլուծությամբ: Ներկայացված են «պար» բառի նրբիմաստները, բազմիմաստությունը և իմաստային փոփոխությունները տարբեր ժամանակահատվածներում, որոնք արտացոլում են լեզվի զարգացման օրինաչափությունները: Առանձնացվել են նաև «պար» արմատով բաղադրված նորակազմությունները, որը կարևոր է հայոց լեզվի բառապաշարի ուսումնասիրության տեսանկյունից: Ուսումնասիրությունն ունի ինչպես լեզվաբանական, այնպես էլ պատմամշակութային կարևորություն՝ արտացոլելով հայոց լեզվի և մշակույթի զարգացման ուղին:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, «պար» արմատը ոչ միայն պահպանել է իր հնագույն իմաստները, այլև հարստացել է նորերով՝ պայմանավորված մշակութային և հասարակական փոփոխություններով:

Բառակազմության տեսանկյունից այն դրսևորում է մեծ բազմազանություն՝ լինելով բազում ածանցավոր, բարդ և հարադրավոր բառերի հիմք: Դրանց մի մասը պահպանել է իր գործածությունը, մինչդեռ որոշ բառեր դարձել են հազվադեպ կամ հնացած:

Բանալի բառեր - *պար, գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն, բառակազմություն, արմատ, ածանց, բարդ բառեր, նորակազմություն*

* **Լուսինե Ղամոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Лусине Гамоян – кандидат филологических наук, старший научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА

Lusine Ghamoyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Language after H. Acharyan of the NAS of the RA

Էլ. փոստ՝ lgamoyan@mail.ru <https://orcid.org/0009-0003-6552-5254>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.09.2025

Գրախոսվել է՝ 07.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

«Պար» հասկացությունը՝ «շուրջ, շրջան, պար, խումբ, շարք» իմաստներով, իրանական փոխառություն է՝ *par- (<հնդեվրոպական *pero-)¹-ից:

Հին գրական հայերենում «պար» բառի նշանակություններն են՝ «1. պարելը, պար գալը, 2. պարողների խումբ, 3. առհասարակ՝ բազմություն, խումբ, դաս, 4. կենդանիների խումբ՝ երամ, յատկապես մեղուների, 5. աստղերի խումբ և նրանց շարժումը, 6. իրերի շարք, 7. նախածանց՝ շուրջ, շուրջանակի նշ.»²:

Միջին հայերենի բառարանում պար արմատի բացատրությունն է «փառ»³, իսկ պարել բառը բացատրվում է «միացնել, կապել» բայերով (ՄՀԲ, 647): «Պարել, պար գալ» հասկացությունն արտահայտվում է պարառիլ բառով՝ «1. պար բռնել, պարել, 2. խումբ կազմել, համախմբվել» (ՄՀԲ, 647):

Գրական արևմտահայերենում «պար» բառի հիմնական նշանակությունն է՝ «շրջան, բոլորակ»⁴:

Գրական արևելահայերենում որոշ իմաստային փոփոխություններ են եղել. գրաբարյան մի քանի իմաստներ դուրս են եկել գործածությունից, ավելացել են նոր նրբիմաստներ: Այսպես՝ «1. նվագի կամ երգի տակ մարմնի բարեձև ու ներդաշնակ շարժումների ամբողջություն (մենակ կամ խմբովին), պար գալը, 2. խաղ, խայտալը, 3. տե՛ս պարեղանակ, 4. (հզվդ.) կողք կողքի շարված առարկաների ամբողջություն, շարք»⁵:

Բացի վերոնշյալ իմաստներից «պար» հասկացությունն արդի հայերենում ունի նաև փոխաբերական իմաստներ՝ «արագ ու հաջորդականորեն իրար հերթագայող շարժումների շարք» (օրինակ՝ մկանների պար), «վետվետանք» (օրինակ՝ լույսի՝ երանգների՝ ցուլքերի պար), «թրթիռ, ծփանք» (օրինակ՝ ալիքների պար) և այլն⁶:

Հաշվի առնելով պար արմատի վերոնշյալ նրբիմաստները՝ նկատել ենք, որ այն ունի բառակազմական մեծ հնարավորություններ, որոնց կանդրադառնանք ստորև:

¹ Տե՛ս Գ. Զառուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ շՄԲ), Եր., 2010, էջ 629: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=51&dt>), Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ շՄԲ), Եր., 1971-1979, հհ. Ա-Դ: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt>)

² Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հհ. 1-2, Եր., 2000: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=67&dt>)

³ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Եր., 2009, էջ 647: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=56&dt>)

⁴ Ռ. Մաքսալետոյեան, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան (այսուհետև՝ ԱԱՆԲ), Եր., 2011, էջ 305: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=107&dt>)

⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ.1-4, Եր., 1969-1980: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt>)

⁶ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Եր., 1976, էջ 1199: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt>)

Այսպես՝ ածանցման կաղապարը ենթադրում է նվազագույնը մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթ: Ըստ հիմքի նկատմամբ ունեցած դիրքի՝ դրանցում առանձնացնում ենք նախածանցավոր և վերջածանցավոր բառեր: Թերևս նախածանցավոր ձևերից հանդիպել ենք միայն մեկ բաղադրություն, այն էլ գրաբարում, օրինակ՝ **անպար**՝ «պարելու անվարժ, պարել չիմացող» (ԳԲ, 1, 137) նշանակությամբ⁷:

Վերջածանցավոր ձևերից են հետևյալ կազմությունները՝ **պարուհի** (ԺՀԼԲԲ, 4, 197), **պարային** (ԺՀԼԲԲ, 4, 185), հազվադեպ գործածություն ունեցող բառերից՝ **պարավոր** «1. պար բռնող, պարող, 2. շուրջը բոլորող՝ պատող» (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարական** «պարող» (ԱՀԲԲ, 1200):

Նշենք, որ Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում առկա է **պարորդ** ածանցավոր կազմությունը՝ «(արվ.) պարող, կաքավորող»⁸ նշանակությամբ, որը, սակայն, մեր ձեռքի տակ եղած մյուս բառարաններում արձանագրված չէ: Այս բառը հանդիպում ենք Վարդան Այգեկցու առակներից մեկում. «Էշին պատվի արժանացրին և հրավիրեցին թագավորի որդու հարսանիքին:

-Վա յ ինձ, - ասում է էշը,- ես ո՛չ շեփորահար եմ և ո՛չ պարորդ և գիտեմ, որ հարսանիքին ինձ վիճակված է ծանր բեռ կամ ջուր կրել» («Ավանակի մեծարումը»)⁹:

Պար արմատով բաղադրված բարդ բառերը համեմատաբար շատ են, ինչպես՝ **պարագլուխ** (հնց.) «պարի գլուխ՝ ղեկավար» (ԺՀԼԲԲ, 4, 184), **պարագույգ** «պարող գույգ» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարախաղ** «պար, պարեղանակ» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարախումբ** «պարողների խումբ» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարակից** «պարի ընկեր, միասին պարող» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարահանդես** (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարահրապարակ** (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարաշար** «պարերի շարք» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարաշղթա** «պարերի շղթա» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարապտույտ** (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարապետ** «պարի պետ՝ ավագ, պարի ղեկավար, պարը վարող» (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարասպարեզ** «պարելու տեղ՝ հրապարակ» (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարասեր** (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարասպետ** «պարի ասպետ, պարերի ժամանակ գույգ կազմող տղամարդ» (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարասրահ** (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարադահլիճ** «պարի դահլիճ» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարատեղ** (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարարվեստ** (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարաքայլ** «պարելու՝ պարի քայլ, պարելու ժամանակ արված քայլ» (ԺՀԼԲԲ, 4, 187), **պարեղանակ** (ԺՀԼԲԲ, 4, 188), **պարերգ** «1. պարի երգ՝ եղանակ, 2. (հնց.) չափածո գրվածքի հատուկ ձև, բալլադ» (ԺՀԼԲԲ, 4, 189), **պարընկեր** (ԺՀԼԲԲ, 4, 191), **պարեկ**¹ «պարող, պար եկող անձ» և այլն:

⁷ Տե՛ս նաև **Ստ. Մախասեանց**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1, Եր., 1944, էջ 171: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId>)

⁸ **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ), Եր., 1967, էջ 545: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=47&dt>)

⁹ **Վարդան Այգեկցի**, Առակներ, Ոսկեփորիկ (Նմուշներ հին և միջնադարյան արձակից), Եր., 1977, էջ 143: (<http://armenianhouse.org/voskeporik/11-g.html>)

Նկատենք, որ վերջինս ունի համանուն՝ **պարեկ**² «1. զորամասի կամ միլիցիայի ոչ մեծ խումբ (կամ ռազմական, ինքնաթիռ) որոշ շրջանի կարգապահությանը՝ անվտանգությանը հսկելու համար, 2. պարեկություն անող (անձ)» (ԺՀԼԲԲ, 4, 188): Այստեղից կարելի է ենթադրել, որ *պարեկ*² բառը ևս ծագում է *պար* արմատից «շուրջը, շրջան» նրբիմաստներով, քանի որ, ի վերջո, դրանք մի խումբ զինծառայողներ են (ստորաբաժանում), որոնք նշանակված են հակառակորդին հետևելու, որոշակի շրջան պահպանելու համար»: Հ. Աճառյանը նշում է. «ՀՀԲ **պար** «շուրջ» + **եկող**» (ՀԱԲ, Դ, 59):

Պարեկ բառից ունենք՝ **պարեկել, պարեկություն անել**:

ԱՀԲԲ-ում արձանագրված է նաև **պարածրագիր** բարդությունը՝ «պարերի ծրագիր որևէ երեկոյի՝ երեկոյթի ժամանակ» իմաստով, որը չկա ԺՀԼԲԲ-ում:

Պար վերջնաբաղադրիչով մի շարք բարդություններ բնորոշում են պարի բնույթը, ինչպես՝ **գեղապար** (հզվդ.) «գեղեցիկ պար» (ԺՀԼԲԲ, 1, 380), **կաքավապար** «կաքավելով պարելը, կաքավանք, մենապար» (ԺՀԼԲԲ, 3, 95), **թատերապար** (հզվդ.) «թատերական ներկայացում, որ արտահայտվում է պարերով՝ դիմախաղերով և երաժշտությամբ (բալետ)» (ԺՀԼԲԲ, 2, 149), **մուլապար** «սաստիկ արագությամբ կատարվող պար» (ԺՀԼԲԲ, 3, 553), **ռազմապար** «ռազմաշունչ պար» (ԺՀԼԲԲ, 4, 248), **խենթապար** «1. կատաղի՝ մոլեգին պար» (ԺՀԼԲԲ, 2, 513), **կենտապար** «առանց ուրիշների մասնակցության, ուրիշներից անկախ մի անհատի պարը, մենապար» (ԺՀԼԲԲ, 3, 109), **կոծապար** «կոծի, սգի պար» (ԺՀԼԲԲ, 3, 164), այդպես նաև **հարսնապար** (ԺՀԼԲԲ, 3, 326), **մենապար** (ԺՀԼԲԲ, 3, 517)՝ որից էլ՝ բարդածանցավոր **մենապարուհի** (ԺՀԼԲԲ, 3, 517) և այլն:

Պար վերջնաբաղադրիչով ունենք նաև **օդապար** «օդում թռչող, սավառնող», որից էլ՝ **օդապարիկ** կամ **օդապարուկ** (ԺՀԼԲԲ, 4, 771) բարդածանցավոր կազմությունները:

Ինչպես նկատեցինք, բարդությունները ածանցավոր կազմությունների համեմատ բավականին շատ են: Սակավ չեն նաև բարդածանցավոր ձևերը, ինչպես՝ **պարահարթակ** (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարաշրջան** (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարաշարք** (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարակցություն** «պարակից լինելը, պարակցելը» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարահանդեսային** (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարերգակ** (ԺՀԼԲԲ, 4, 189), **պարերգու** (ԺՀԼԲԲ, 4, 189), **պարերգություն** (ԺՀԼԲԲ, 4, 189), **պարերեկույթ** (ԺՀԼԲԲ, 4, 189), **պարընկերուհի** (ԺՀԼԲԲ, 4, 191), **պարօղակ** «պարողների շրջան՝ օղակ կազմած խումբ» (ԺՀԼԲԲ, 4, 198), **պարուսույց** «պար ուսուցանող՝ սովորեցնող անձ» (ԺՀԼԲԲ, 4, 198) և այլն:

Արդի գրական արևմտահայերենում հանդիպում ենք **պարագիտություն** բարդածանցավոր կազմությանը (ԱԱՆԲ, 305), որն առկա չէ ԺՀԼԲԲ-ում, ունենք նաև **պարանցիկ** «պարելով՝ խաղալով անցնող» (ԱԱՆԲ, 306), իսկ *խմրեղորաֆիա* (պարարվեստ) փոխառյալ բառի դիմաց արևմտահայերենը տալիս է **պարագրություն** կազմությունը (ԱԱՆԲ, 306):

Կան բազմաթիվ բարդ և բարդաձանցավոր բառեր էլ, որոնք ունեն հազվադեպ գործածություն, ինչպես՝ **պարամոլ** «մոլի պարող, մոլի պարասեր (անձ)» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարամոլություն** «պարամոլ լինելը» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարաձև** «պարի ձև» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարազվարճ** «պարելով զվարճացած, պարելով զվարճացող» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարախնդություն** «պար և ուրախություն, պարելով ուրախանալը» (ԺՀԼԲԲ, 4, 185), **պարասաց** «պարի ժամանակ խաղ՝ երգ ասող՝ երգող», **պարապետուհի** «պարի ղեկավար կին, պարը վարող» (ԺՀԼԲԲ, 4, 186) և այլն: Այս բառաշարքից արդեն դուրս է մնացել **պարայր** բարդությունը՝ «պարասպետ» իմաստով, որն արդեն գործածական չէ (ԱՀԲԲ, 1200):

Պար արմատով ունենք նաև նորակազմություններ¹⁰՝ **պարադեր** «դեր պարի համար» (ՆԲ, Բ, 118), **պարադիր** «պարի հեղինակ, պարաստեղծ» (ՆԲ, Ա, 158), **պարանմուշ** «պարի նմուշ» (ՆԲ, Ա, 158), **պարագետ** «պարի մասնագետ» (ՆԲ, Դ, 132), **մերկապար**, որից էլ՝ բարդաձանցավոր **մերկապարուհի**, **մերկապարող** «մերկապար կատարող» (ՆԲ, Է, էջ 166), **մերկապարող** (ՆԲ, Դ, 113), **պարերեկույթ** «պարի երեկույթ» (ՆԲ, Է, 201), **պարուսուցում** «պար ուսուցանելը» (ՆԲ, Զ, 151), **պարաբեմադրիչ** «պար բեմադրող» (ՆԲ, Դ, 132), **պարերաժշտություն** «պարեղանակ» (ՆԲ, Գ, 118), **ծաղրապար** «պար՝ ծաղրական շարժումներով՝ մեկին ծաղրանքով ընդօրինակելով» (ՆԲ, Զ, 74), **ծովապար** «(բնատ., փխբ.) ծովի ջրերի շարժումը հիշեցնող պար» (ՆԲ, Զ, 78) և այլն:

Դիպվածային բառերի մեջ հանդիպել ենք **պարավազք անել** «պարային շարժումներ անել» հարադրավոր բարդությանը, ինչպես՝ «[Ավտոմեքենաները] ընթանում էին մուրճի փաթիլի լուսարձակի կլոր շողքի մեջ պարավազք անող պարուհու նման» (ՆԲ, Է, 200):

Արևմտահայերենում արձանագրված է **պարերգուհի** նորակազմությունը՝ «պարային երգ կատարող աղջիկ, կին // պարող ու երգող աղջիկ, կին»¹¹ իմաստով:

Պար+ել՝ **պարել** բայից ունենք՝ **պարելացավ** «պարելու ցավ՝ մոլություն» (ԺՀԼԲԲ, 4, 188), **մենապարել** (ԺՀԼԲԲ, 3, 517), **գեղապարել** «գեղեցիկ պարել» (ԺՀԼԲԲ, 1, 380) կազմությունները:

Պար-ը, որպես բայարմատ, առկա է **պարերգել** «պարել և երգել» (ԺՀԼԲԲ, 4, 189) և հազվադեպ հանդիպող **պարազվարճ** «պարելով զվարճացած, պարելով զվարճացող» (ԺՀԼԲԲ, 4, 185) նշանակություններով բառերում:

Պար արմատից՝ «պարելը, պար գալը» իմաստով, հայերենում կազմվել են բազմաթիվ հարադրավոր բարդություններ, ինչպես՝ **գրաբարում՝պար առնուլ**, **պար անցանել**, **ի պարու գալ**, **պար յօրինել** և այլն (ԳԲ, 2, 402), **արդի**

¹⁰ Տե՛ս Նոր բառեր (այսուհետև՝ ՆԲ), Ա-Է, պր. Զ, Եր., 2015-2022:

(<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=145&dt>)

¹¹ **Տիոյեան Ս., Ֆիշենկճեան Ա., Մարաշեան Յ.**, Նոր բառեր արևմտահայերենի մեջ, Ա գիրք, Եր., 2021, էջ 114: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=141&dt>)

գրական արևելահայերենում՝ **պար ածել** «1. պարել տալ, 2. խաղացնել», **պար բռնել** «ձեռք ձեռքի տված շրջան կազմել պարելու համար. սկսել պարել», **պար բոլորել** «պար բռնել, պար գալ», **պար գալ** «պարել», **պար խաղալ** «պարել, պար գալ», **պար մտնել** «պարին միանալ, սկսել պարել», **պար պարել** «պարել» և այլն (ԺՀԼԲԲ, 4, 184), *արևմտահայերենում՝ պար դառնալ* «պար գալ» (ԺՀԼԲԲ, 4, 184) և այլն:

Պարամեջ կազմությանը հանդիպում ենք միայն հետևյալ հարադրություններում՝ **պարամեջ մտնել** «պարի մեջ մտնել, պարին մասնակցել, պարողներին միանալ», **պարամեջ քաշել** «պարել տալ, պարողներին միացնել, պարի մասնակից դարձնել» (ԱՀԲԲ, 1200):

Քիչ չեն նաև այնպիսի կազմությունները, որտեղ *պար* արմատն ունի «շուրջ, շրջան» նրբիմաստները: Այսպես. **պարեգոտ** բառի բառակազմական քննությանը մանրամասն անդրադարձել է Էդ. Աղայանը առանձին աշխատության մեջ, որում հակադրվելով մի շարք լեզվաբանների՝ պնդում է, որ այն իրանական փոխառություն չէ, այլ բնիկ հայերեն բառ՝ հնագույն հայկական բարդություն, որտեղ *գալտ* արմատը «նախապես նշանակել է «պատող, պարտորող, ծածկող»: Ըստ այսմ՝ **պարեգոտ** նշանակել է «շուրջը պատող, չորս կողմից պատող», ինչպես որ **շուրջառ** բառը»: Այստեղից էլ եզրակացվում է, որ պար-ը ոչ թե նախամասնիկ է, որովհետև այդ դեպքում կլինեի *պարագոտ* կամ *պարգոտ*, ինչպես՝ *պարագիծ*, *պարագոտել* «մեջքին գոտի կապել» բառերում, այլ արմատ է՝ վերոնշյալ «շուրջը» իմաստով և նշանակում է ոչ թե «գոտի ունեցող, գոտիով կապվող վերարկու», ինչպես նշվում է ՆՀԲ-ում¹² և այլ բառարաններում, այլ պարզապես «վերարկու»¹³:

Ուշագրավ է նաև **պարիսպ** բառը՝ «1. քաղաք՝ բերդ՝ այգի՝ տուն և այլն պաշտպանելու համար մի կողմից կամ շուրջը քաշած պատ, 2. փխբ. արգելք, 3. փխբ. ապահովություն, պաշտպանություն, նման առարկաների պարսպանման շարք» իմաստներով (ԺՀԼԲԲ, 4, 191): Միջին պարսկերենից փոխառված այս արմատը «ծագում է pari - «շուրջ» մասնիկով spā «արկանել, գցել» արմատից, իբր «շուրջ արկեալ»։ Ի դեպ, Աճառյանը նշում է, որ «այս բառը բոլոր իրանեան լեզուների մեջ կորած է, պահում է միայն հայերենը» (ՀԱԲ, Դ, 62):

Պարույկ «ոլորակ նշանը (°) և սրա համեմատ առողանութեան ձև» և **պարույր** «ծիր, շրջան, պտույտ» արմատների ծագումը ևս կապվում է *պար* բառի հետ: Այս արմատների բուն նշանակությունը ևս «շրջան»-ն է, կազմված են *պար* «շուրջ» արմատից՝ -ոյկ և -ոյր մասնիկներով: **Պարույկ** արմատից գրաբարում ունենք հետևյալ կազմությունները՝ **պարույկ որմոյ** «պարսպի շրջա-

¹² Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Միսրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 632: (<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26&dt>)

¹³ Տե՛ս Էդ. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 132-135:

պատր»», **պարոյկանուն**, **յանգապարոյկ**, **յարապարոյկ**, **պարուկիլ** «ձայնը ոլորուիլ» (ՀԱԲ, Դ, 65), **պարոյկացեալ** «շրջապատուած», **պարուկանալ** «ձայնը ոլորակուել» (ԳԲ, 2, 408) և այլն:

Արդի հայերենում *պարույր* արմատը («1. մի կետի կամ առանցքի շուրջը մի շարք պտույտներ գործող պտուտակաձև լար, զսպանակ, 2. ծիր, շրջագիծ, պտույտ, ոլորք, 3. արական անձնանուն») մի շարք բառերի սկզբնաբաղադրիչ է՝ **պարուրագիծ**, **պարուրագսպանակ**, **պարուրաթոկ**, **պարուրակ**, **պարուրակահղկում**, **պարուրաձև**, **պարուրանման**, **պարուրաշարժում**, **պարուրապարան**, **պարուրել**, **պարուրիչ**, **պարուրում** (ԺՀԼԲԲ, 4, 198), **պարուրագործ** (ԺՀԼԲԲ, 4, 197) և այլն, իսկ որպես վերջնաբաղադրիչ առկա է **գեղապարույր** (ԺՀԼԲԲ, 1, 380), **անպարույր** (ԺՀԼԲԲ, 1, 130) և այլ կազմություններում:

Գ. Ջահուկյանը *պարան* («պարան, չվան, երկարության մի չափ, որթատունկերի շարք») արմատի ծագումը ևս կապում է *պար* արմատի հետ՝ *-ան* վերջածանցով, ապա այն համեմատում է *պարանիլ* «շրջվել, հետ դառնալ» արմատի հետ (ՀԱԲ, 629):

Հ. Աճառյանը նշում է, որ հետոսկեդարյան շրջանում *պար* արմատը դարձել է նախամասնիկ, ինչպես՝ **պարագա**, **պարառել**, **պարունակել**. այս գործածությամբ ունենք նաև փար- ձևով, ինչպես՝ **փարաբառնալ**, **փարադրել** և այլն (ՀԱԲ, Դ, 55), *պար(ա)-* բաղադրիչը, որպես նախդիր-նախածանց, առկա է հետևյալ բառերում՝ **պարբերական**, **պարբերաբար** և այլն (ՀԱԲ, Դ, 55):

Որպես նախածանց՝ *պար-*ն առկա է նաև հետևյալ կազմություններում՝ **պարագիծ** «1. շրջագիծ, 2. (մաթ.) գծի երկարություն» (ԺՀԼԲԲ, 4, 184), **պարապինդ** «(հնց.) ամեն կողմից պատած, ամուր նստած» (ԺՀԼԲԲ, 4, 186), որից՝ արդեն հնացած **պարապնդել** բաղադրությունը՝ «ամեն կողմից պատել, շրջապատել» իմաստով (ԺՀԼԲԲ, 4, 186), **պարփակ** «(հզվդ.) պարփակող, պարփակված», որից էլ **պարփակել** «1. ընդգրկել, ամփոփել, բովանդակել, տեղավորել», **պարփակվածություն** «պարփակված լինելը, ամփոփվածություն», **պարփակում** և այլն (ԺՀԼԲԲ, 4, 198):

ԱՀԲԲ-ում հանդիպում ենք **պարակալ** կազմությանը՝ «պատուհանի՝ դռան շրջանակի շուրջը դրվող ձողաձև տախտակ, երեսակալ, շրջակալ» նշանակությամբ, այստեղից էլ **պարակալել** (ԱՀԲԲ, 1200):

«1. Շրջափակել, պարփակել, 2. պարունակել, բովանդակել, 3. սահմանել» իմաստներով արդի գրական արևմտահայերենում ունենք **պարագրել** (ԱԱՆԲ, 305), «(հզվդ.) շրջող, անցնող» իմաստով՝ **պարագնաց** (ԺՀԼԲԲ, 4, 184) կազմությունները, ինչպես նաև՝ **պարածածկել** «(հզվդ.) չորս կողմից ծածկել, բոլորովին ծածկել՝ պատել, պարուրել» իմաստներով ածանցավոր կազմությունները (ԺՀԼԲԲ, 4, 185):

Այս իմաստով գրաբարում հանդիպում ենք **պարակտրել** «շուրջանակի կտրել», **պարահատումն** «շուրջանակի կտրելը, պարաբառնալը», **պարայածումն** «շուրջը պտոյտ գալը, շրջահայելը» (ԳԲ, 2, 403) և այլն:

Ի դեպ, եթե արդի գրական հայերենում **պարաձև** կազմությունն ունի «(հզվդ.) պարի ձև» իմաստը (ԺՀԼԲԲ, 4, 185), ապա գրաբարում «շուրջըլորու-լած, շրջանաձև» նշանակությունն է ունեցել (ԳԲ, 2, 403):

Ինչպես նշել էինք, *պար* արմատն ունի նաև «խումբ, շարք» նրբիմաստները, որը նկատելի է հետևյալ բառերում. **պարս** «1. նոր ընտանիք կազմելու համար մայր փեթակից բաժանված ձագ տվող մեղունների երամ, 2. (հզվդ.) մեղուների երամը փեթակի մեջ», **պարսամայր** «մեղվաընտանիքի մայր մեղուն», **խորդապար/խորդապարս** «կռունկների երամ» (ԺՀԼԲԲ, 2, 569) և այլն:

Այս իմաստով գրաբարում առկա է **պարայարմար** կազմությունը՝ «յարմար կերպով շարուած, շարքով դասաւորուած» նշանակությամբ:

«Խումբ» իմաստն առկա է նաև գրաբարյան հետևյալ կազմություններում՝ **պարաւորութիւն**՝ «խումբ, խմբակցութիւն» (ԳԲ, 2, 405), **պարապետ**՝ «որևէ խմբի գլխաւոր, ղեկավար, առաջնորդ, պարագլուխ» (որից՝ **պարապետութիւն**) (ԳԲ, 2, 404), **պարառաջ**՝ «խմբի առաջնորդ, ղեկավար, պարագլուխ» (ԳԲ, 2, 404) և այլն: Ի դեպ, այսօր արդի հայերենում *պարապետ* բառն ունի «պարի պետ՝ ավագ, պարի ղեկավար, պարը վարող» իմաստը (ԺՀԼԲԲ, 4, 186):

Պար արմատից՝ «շուրջը» և «խումբ» նրբիմաստներով ևս ունենք հարադրավոր բարդություններ, ինչպես՝ **պարս տալ**՝ «մեղունների խմբուիլը» (ՀԱԲ, Դ, 55), **պար արկանել**՝ «շրջապատել» (ՀԱԲ, Դ, 55) և այլն:

Այսպիսով՝ ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, «պար» արմատը ոչ միայն պահպանել է իր հնագույն իմաստները, այլև հարստացել է նորերով՝ պայմանավորված մշակութային և հասարակական փոփոխություններով:

Բառակազմության տեսանկյունից այն դրսևորում է մեծ բազմազանություն՝ լինելով բազում ածանցավոր, բարդ և հարադրավոր բառերի հիմք: Դրանց մի մասը պահպանել է իր գործածությունը, մինչդեռ որոշ բառեր դարձել են հազվադեպ կամ հնացած:

ЛУСИНЕ ГАМОЯН – Понятие “танец” и его словообразовательные особенности в литературном армянском языке. – Данная работа представляет собой углубленное и детальное исследование, охватывающее этимологические и семантические особенности корня «танец» в разные периоды развития армянского языка, а также выражение его словообразовательных возможностей в литературном языке. Исследование проводится в двух направлениях: диахронический анализ, рассматривающий смысловую эволюцию понятия «танец»; синхронический анализ разбора составных слов с данным корнем. Особое внимание уделено оттенкам значения корня «танец», его полисемии и семантическим изменениям. Также выделены содержащие корень "танец" неологизмы, что является важным с точки зрения изучения лексического состава армянского языка. Как показывают исследования, корень слова «танец» не только сохранил свои древние значения, но и обогатился новыми в результате культурных и социальных изменений.

С жанровой точки зрения он демонстрирует большое разнообразие, являясь основой многих известных, сложных и выразительных жанров. Некоторые из них сохранили свою функцию, в то время как другие стали редкими или устарели.

Ключевые слова: *танец, грабар, среднеармянский, восточноармянский, западноармянский, словообразование, корень, суффикс, сложные слова, неологизмы*

LUSINE GHAMOYAN – The Concept of “Dance” and Its Word-forming Features in the Literary Armenian Language. – This paper is an in-depth and detailed study covering the etymological and semantic features of the root “dance” in different periods of the Armenian language development, as well as the expression of its word-formation possibilities in the literary language. The study is conducted in two directions: diachronic analysis, which examines the semantic evolution of the notion of “dance”; and synchronic analysis of the parsing of compound words with this root. Special attention is paid to the nuances of the meaning of the root “dance”, its polysemy and semantic changes. Also neologisms containing the root “dance” are highlighted, which is important from the point of view of studying the lexical composition of the Armenian language.

As research shows, the root of "dance" has not only preserved its ancient meanings, but has also been enriched with new ones, due to cultural and social changes.

From the perspective of the genre, it exhibits great diversity, being the basis of many familiar, complex and expressive genres. Some of them have retained their function, while others have become rare or obsolete.

Key words: *dance, Grabar, Middle Armenian, Eastern Armenian, Western Armenian, word formation, root, suffix, compound words, neologisms*

References

- Aghayan, Ed. 1976. *Ardi hayereni bac' atrakan ba'aran*. Yerevan (in Armenian).
- Aghayan, Ed. 1974. *Ba'aknnikan ew stugabanakan hetazotut'yunner*. Yerevan (in Armenian).
- Ačařyan, H. 1979. *Hayerēn armatakan ba'aran*. Vol. D. Yerevan (in Armenian).
- Avetik'ean, G., Kh. Siwrmelean, and M. Awgerean. 1836–1837. *Nor ba'girk' haykazean lezui*. Vols. 1–2. Venetik (in Armenian).
- Zhamanakakic' hayereni bac' atrakan ba'aran. 1969–1980. Vols. 1–4. Yerevan (in Armenian).
- Łazarean, R. 2000. *Grabar' ba'aran*. Vols. 1–2. Yerevan (in Armenian).
- Łazaryan, R., and H. Avetisyan 2009. *Mijin hayereni ba'aran*. Yerevan (in Armenian).
- Malkhaseanc', St. 1944. *Hayerēn bac' atrakan ba'aran*. Vol. 1. Yerevan (in Armenian).
- Nor ba'ar (compiled by A. Galstyan et al.). 2015–2022. A–Z. Yerevan (in Armenian).
- Čahukyan, G. 2010. *Hayeren stugabanakan ba'aran*. Yerevan (in Armenian).
- Sak'apetoyean, R. 2011. *Arevmtahayerēn–arevelahayerēn nor ba'aran*. Yerevan (in Armenian).
- Sukiasyan, A. 1967. *Hayoc' lezvi homanišneri ba'aran*. Yerevan (in Armenian).
- Vardan Aygekc'i. 1977. *Arakner, Voskeporik (Nmushner hin ew miĭnadaryan arzatic')*. Yerevan (in Armenian).
- Tioyean, S. A. Fišenč'ean, and Y. Marašlean. 2021. *Nor ba'ar arevmtahayereni mej*. Book A. Yerevan (in Armenian).